

Հայաստանէն չորս արուեստագէտներ

Եգիպտոսի Յրդ Պիէննալի-ին

1996-ի Դեկտեմբերին, տեղի ունեցաւ Եգիպտոսի Յրդ Պիէննալի-ն, որ կը կազմակերպուի երկու տարին անգամ մը:

Այս տարի Պիէննալի-ին մասնակցած էին 181 արուեստագէտներ, ներկայացնելով 46 երկիր:

Հայաստանէն չորս արուեստագէտներ, Արամ Իսապէկեան, Սամուէլ Համբարձումեան, Արա Հայաթեան եւ Ալպէո Աւետիսեան, իրենց մասնակցութիւնը բերած էին այս Պիէննալի-ին, ներկայացնելով Հայաստանը:

«Տեղեկատու»ն, օգտուելով այս առիթէն, կարճ հարցազրոյց մը ունեցաւ, Հայաստանի Գեղարուեստական Ինստիտուտի Տնօրէն (Ռէկորդ) Արամ Իսապէկեանի հետ, որ առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Եգիպտոս, եւ կը մասնակցէր Պիէննալի-ին:

Հարց. Ձեր մասնակցութիւնը Պիէննալի-ին անձնական նախաձեռնութեամբ էր, թէ պաշտօնական հրաւերով:

Պատասխան. Ամէն տարի, Հայաստանի Նկարիչներու Միութիւնը պաշտօնական հրաւեր կը ստանայ, մասնակցելու Պիէննալի-ին եւ նկարիչներու միութեան անդամ ռեւէ արուեստագէտ, իրաւունք ունի մասնակցելու:

Այս տարի մենք չորսս որոշեցինք մասնակցիլ: Մեզի համար, որպէս արուեստագէտներ, միշտ ալ հետաքրքրած է Եգիպտոսի մշակոյթը: Պիէննալի-ն առիթ մըն էր ծանօթանալու այս հին ժողովուրդի արուեստին: Մենք այս ցուցահանդէսին մեր մասնակցութիւնը բերինք նկարչութեան, քանդակի եւ կրաֆիկայի գործերով:

Հ.: Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները Պիէննալի-ի մասին:

Պ.: Չենք կրնար ըսել թէ շատ լաւ կազմակերպուած էր, կային որոշ թերութիւններ: Նախ այն ցուցասրահները որտեղ ցուցադրուած էին մասնակցողներու աշխատանքները, բոլորը յարմար սրահներ չէին:

Որոշ աշխատանքներ ցուցադրուած էին կեդրոնական տեղեր, ինչպէս Օբերայի դահլիճը եւ այլ աշխատանքներ երկրորդական սրահներու մէջ:

Օրինակի համար, մեր աշխատանքները որոնք ցուցադրուած էին Պահրէյնի եւ Պուսիոյ գործերուն հետ, բաղդատած այլ մասնակցողներու գործերուն, բաւական բարձր արուեստով էին, սակայն, կեդրոնական տեղ մը չցուցադրուելու պատճառով անծանօթ մնացին հանրութեան եւ չստացան իրենց արդար գնահատականը: Եւ այսպէս, շատ մը երկիրներու գործերը:

Յոյսով ենք որ յառաջիկայ տարիներուն աւելի լաւ կը կազմակերպուին այս հարցերը: Ի հարկէ, հեշտ չէ այսպիսի մեծ ցուցահանդէս մը կազմակերպելը, եւ գնահատելի է Եգիպտոսի տարած աշխատանքը այս ուղղութեամբ:

Այնուամենայնիւ, մենք շատ գոհ ենք որ եկանք ու մասնակցեցաք Պիէննալի-ին, լաւ փորձառութիւն մըն էր մեզի համար, եւ միաժամանակ լաւ առիթ մըն էր ծանօթանալու ձեզ՝ եգիպտահայութեան:

Հ.: Պարզ է որ Պիէննալի-ն մէկն է այն ցուցահանդէսներու շարքին, որուն մասնակցած էք արտասահմանեան երկիրներուն մէջ: Այդ երկիրներու արուեստը բաղդատելով մերինին հետ, ի՞նչպէս կը գնահատէք հայկական արուեստը:

Պ.: Նախ կ'ուզեմ յիշել թէ մենք այս վերջին հինգ տարիներուն է որ ազատութիւնը ունեցանք ցուցահանդէսներու մասնակցելու արտասահմանի մէջ:



Արամ Իսապէկեան

Նախքան անկախութիւնը, շատ աւելի դժուար էր անհատական ցուցահանդէսներ կազմակերպելը: Օրինակի համար, իօրս աման Ակարիչ մը (Էտուար Իսապէկեան), իր ամբողջ կեանքի տեւողութեան տուած է ընդամենը ութ անհատական ցուցահանդէս, այն ինչ արտասահմանի ցանկացածդ Ակարիչ կամ արուեստագէտ, կրնայ մասնակցած ըլլալ 20-30 ցուցահանդէսի:

Այն ժամանակ Առնիսկ եթէ մասնակցէիճք, կը մասնակցէիճք որպէս սովետական քաղաքացիներ եւ շատ անգամ մեր աշխատանքները կը դրկուէին արտասահման առանց մեր երթալուն: Հետեւաբար, մենք համարեայ շփում չենք ունեցած արտասահմանի արուեստագէտներուն հետ: Իսկ հիմա, որ համեմատաբար աւելի հնարաւորութիւնը ունեցանք մօտէն ծանօթանալու այլ երկիրներու արուեստին, մենք տեսանք որ մեր արուեստը բարձր է, եւ մենք շատ աւելի տաղանդաւոր Ակարիչներ ու արուեստագէտներ ունինք քան ուրիշները: Մերոնք, պարզապէս առիթը չեն ունեցած արտասահմանի մէջ ճանաչում գտնելու:

Հ.: Հայաստանի արուեստագէտները ի՞նչպէս կը յաղթահարեն Արիթական դժուարութիւնները եւ Հայաստանի մէջ կա՞ն մարմին մը որ կը զբաղի արուեստագէտներու Արիթական պահանջքները բարարելու հարցով:

Պ.: Կան շատ լուրջ դժուարութիւններ, մենք շատ մեծ դժուարութիւններով՝ մեր անձնական միջոցներով է որ կը պահպանենք մեր արուեստը Հայաստանի մէջ:

Նախքան անկախութիւնը, պետութիւնն էր այս բոլոր հարցերով զբաղողը, որ իր կարգին օգնութիւն կը ստանար Մոսկուայէն:

Հիմա, օգնութեան ոչ մէկ աղբիւր ունինք: Ենթադրուած է որ մշակոյթի Ախարարութիւնը զբաղի բոլոր այս հարցերով, սակայն մինչեւ այսօր չէ զբաղած կամ կարողութիւնը չէ ունեցած զբաղելու. այլապէս մշակոյթի Ախարարութիւնն էր որ պիտի հոգար Պիէննալի-ին մեր մասնակցութեան ծախսերը: Իսկ մենք, մեծ զոհողութիւններով եկած ենք մեր անձնական միջոցներով: Սա չի Աշխատանքի թէ մենք դժգոհ ենք իրավիճակէն, շատ բնական է որ Առակազմ պետութիւն մը կրնայ հանդիպիլ այսպիսի դժուարութիւններու: Այս բոլոր խնդիրները անհնար է մէկ անգամէն լուծել եւ մենք համոզուած ենք որ մեր աշխատանքով կամաց կամաց կը յաղթահարենք մեր բոլոր դժուարութիւնները: Կարելորը այն է, որ մենք հիմա ունենանք կայուն պետութիւն, կայուն իշխանութիւն:

Հ.: Ի՞նչպէս կը պատկերացնէք հայ մշակոյթի ու արուեստի ապագան, անկախ հայրենիք ունենալէ ետք:

Պ.: Մեր փոքր Հայաստանը ոչ ուժով եւ, ոչ զէնքով կրնայ զարմացնել մէկուն, այլ իր արուեստով: Այդ առումով, մենք արդէն ունինք այդ կարողականութիւնը (բոտենցեալը): Մենք ունինք աւելի քան հարիւր կոմպոզիտորներ, կոնսերվատուար, գրողներու միութիւն, ճարտարապետներու միութիւն, Ակարիչներու միութիւն՝ որ ունի հնգար անդամ, գեղարուեստի ինստիտուտ եւայլն... եւ այս բոլորը հզօր բանակ մըն է, որ շատ դժուար է պահպանելը: Եթէ մենք մինչեւ այսօր, այս դժուար պայմաններուն տակ կրցած ենք պահպանել եղածը, ուրեմն համոզուած ենք որ պիտի շարունակենք պահպանել եւ բարգաւաճիլ աւելի լաւ պայմաններու տակ:


Եւ մեր ապագան կը տեսնեմ մեր երիտասարդներուն մէջ, եւ որպէս Գեղարուեստական Ինստիտուտի տնօրէն ամէն նոր ընդունուող երիտասարդի լուրջ հարց կու տամ, թէ իրենք համոզուած են իրենց ընտրած մաքսաման ուղիով: Մտածեցէք թէ ի՞նչ պիտի ընէք աւարտելէ ետք, ինչպէ՞ս պիտի աշխատիք: Եւ այս բոլորէն ետք կը յամառին ու կը մնան, անոնք որոնք իսկապէս պէտք է մնան: Կը մաղուին այն իսկական արուեստագէտները, որոնք ապագային հարազատ թարգմանները պիտի ըլլան մեր հայ արուեստին:

Հ.: Վերադառնալով ձեր Եգիպտոս այցելութեան, արդեօք ձեր կեցութեան ընթացքին, առիթը ունեցա՞ք այցելելու Եգիպտոսի տեսարժան վայրերը:

Պ.: Այո, ի հարկէ, մենք տեսանք բուրգերը, որոնք շատ հետաքրքրական էին մեզի համար, այցելեցինք Լուքսորը, ի միջի այլոց Հ.Բ.Մ.ը բարի գտնուեցաւ եւ իր վրայ վերցուց մեր Լուքսոր այցելութեան ամբողջ ծախսերը, եւ մենք վայելեցինք Լուքսորի հնութիւնները, Քարնաքը եւ ամէն ինչ, մէկ խօսքով շատ հետաքրքրական էր մեզի համար Եգիպտոս այցելութիւնը:

Հ.: Վերջացնելով մեր այսօրուան հանդիպումը, ի՞նչ խօսք ունիք ըսելիք եգիպտահայ գաղութին նախքան հրաժեշտ տալը:

Պ.: Կ'ուզեմ բոլորը իմանան, թէ Հայաստանը մեր, ձեր, բոլորիս հայրենիքն է: Եթէ դժուարութիւններ կան մէկ անգամէն չեն լուծուիր, եկէք աշխատինք միասնաբար կերտելու համար մեր հայրենիքը ... բաւական է որ անկախ ենք ... անկախ ենք մեր բոլոր դժուարութիւններով եւ ուրախութիւններով, ու համոզուած ենք, որ պիտի գայ այն օրը որ Հայաստանը այնքան պիտի քարգաւանդի, որ բոլոր պիտի ցանկանար այնտեղ ապրիլ:



ԱՐԱՄ ԻՍԱՊԷԿԵԱՆ

Ծնած է Երեւան 1952-ին: 1970-76 յաճախած է Երեւանի Գեղարուեստական Ինստիտուտը: Մասնակցած է աւելի քան 60 ցուցահանդէսներու Հայաստանի, Սուրիոյ, Շուէտի, Լեհաստանի, Հունգարիոյ, Գերմանիոյ, Ամերիկայի եւ այլ երկիրներու մէջ: 1979-էն սկսեալ դասաւանդած է Երեւանի Գեղ. Ինստիտուտին մէջ, իսկ 1982-ին անդամակցած է Ակադեմիայի միութեան:

Նոյն տարին երկու անձնական ցուցահանդէսներ կազմակերպած է Երեւանի եւ Էջմիածնի մէջ:

1990-94 եղած է փոխ տնօրէնը Երեւանի Գեղարուեստական Ինստիտուտին, իսկ 1993-ին եղած է Նկարիչներու Միութեան, Ակադեմիայի քարտէսին նախագահը:

Արամի գործերը կը գտնուին Հայաստանի ազգային թանգարանին, Ժամանակակից արուեստի թանգարանին ինչպէս նաեւ Էջմիածնի, Հրազդանի, Գիլիջանի, Մարտունիի, Մոսկուայի թանգարաններուն մէջ: (Գործեր ունի նաեւ Միացեալ Նահանգներու, Գանատայի, Սուրիոյ, Լիբանանի, Լեհաստանի, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ):

Հարցազրոյցը վարեցին

Պրիծիթ Գալընեան - Սաթօ Աբգարեան